ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.03.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

ԹԻՎ ՍՑ-ԷՍ-2019/52

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 27.02.2019թ. թիվ 26/26/3146-19 գրությամբ «Ջի Թի Սի» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 02677537/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Արտաշատի ԲԿ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 15.02.2019թ. թիվ 22 գրության հիման վրա, 27.02.2019թ. նախաձեռնել է «Ջի Թի Սի» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>«Արտաշատի ԲԿ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Արտաշատի ԲԿ» ՓԲԸ-ն 15.02.2019թ. թիվ 22 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««ԱԲԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-2019/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացքում տեխնիկական բնութագրի առաջարկ ստանալուց հետո «Ջի Թի Սի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված 3-ում արտադրողի անվանումը բացակայում էր, որը շտկելու համար համակարգի միջոցով մասնակցին տրվել է հնարավորություն, սակայն սահմանված ժամանակահատվածում մասնակիցը չի կատարել շտկում:

««ԱԲԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-2019/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովը որոշել է՝ ըստ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակցի հայտը մերժել»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Հասմիկ Մկրտչյանը:

3. <u>«Ջի Թի Սի» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը դիմել է «Ջի Թի Սի» ՍՊԸ-ին՝ հնարավորություն ընձեռելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 27.02.2019թ. թիվ 26/26/3146-19 գրությամբ Բողոքներ քննող անձի մոտ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր դիրքորոշումը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ընկերությունը ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից 05.03.2019թ., 12.03.2019թ., 15.03.2019թ., և 20.03.2019թ. հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն վերջինիս կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

4. <u>ՍՑ-ԷՍ-2019/52 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.02.2019թ. թիվ 26/26/3146-19 գրությունը և կից փաստաթղթերը, «Արտաշատի ԲԿ» ՓԲԸ-ի 15.02.2019թ. թիվ 22 գրությունը, «ԱԲԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-2019/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ԱԲԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-2019/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 23.01.2019թ. նիստի թիվ 2, 05.02.2019թ. նիստի թիվ 3, 11.02.2019թ. նիստի թիվ 4 արձանագրությունները, «Ջի Թի Սի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը.

«Արտաշատի ԲԿ» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԱԲԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-2019/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ (այսուհետ նաև՝ Աճուրդ), որին ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ էր ներկայացրել «Ջի Թի Սի» ՍՊԸ-ն:

Ընկերությունը Աճուրդին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N1 հավելվածի՝ դիմում-հայտարարության 4-րդ կետով հայտարարել և հավաստել է, որ «ԱԲԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-2019/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին մասնակցելու նպատակով նույն դիմում-հայտարարությունում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին, և պարտավորվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ԱԲԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-2019/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների) անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Հանձնաժողովի 23.01.2019թ. նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ «ԱԲԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-2019/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 56-րդ, 61-րդ, 80-րդ, 81-րդ և 89-րդ չափաբաժինների մասով Ընկերությանը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Նույն արձանագրության 4.3 կետով Հանձնաժողովը որոշել է էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով ծանուցել առաջին տեղն զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով ծանուցումը ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը, առաջարկվող ապրանքի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը:

Ընկերությունը Հավելված 3-ով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով ներկայացրել է հետևյալ տեղեկատվությունը.

• 56-րդ չափաբաժին. Անվանումը՝ Վալպրոատ Na 300 մգ, ապրանքային նշանը՝ Դեպախրոն 300մգ, արտադրողի անվանումը՝ նշված չէ, ծագման երկիրը՝ Բանգլադեշ, տեխնիկական բնութագիրը՝ դեղահատ 300 մգ:

• 61-րդ չափաբաժին. Անվանումը՝ Տրիմետազիդին 35 մգ, ապրանքային նշանը՝ Պրեդուկտրիմ 35 մգ, արտադրողի անվանումը՝ նշված չէ, ծագման երկիրը՝ Բանգլադեշ, տեխնիկական բնութագիրը՝ դեղահատ 35 մգ:

• 80-րդ չափաբաժին. Անվանումը՝ Հակակատաղության վակցինա, ապրանքային նշանը՝ Հակակատաղության վակցինա, արտադրողի անվանումը՝ նշված չէ, ծագման երկիրը՝ Հնդկաստան, տեխնիկական բնութագիրը՝ լուծույթ ներարկման 0-5% սառնարանային ռեժիմ:

• 81-րդ չափաբաժին. Անվանումը՝ ԱՍ անատոքսին, ապրանքային նշանը՝ հակափայտացման անատոքսին, արտադրողի անվանումը՝ նշված չէ, ծագման երկիրը՝ Ռուսաստան, տեխնիկական բնութագիրը՝ լուծույթ ներարկման 0-5% սառնարանային ռեժիմ:

Հանձնաժողովի 05.02.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության 1.2 կետի համաձայն՝ «ԱԲԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-2019/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են մասնակիցների ներկայացրած հայտերը, և «Ջի Թի Սի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված 3-ում բացակայում է արտադրողի անվանումը:

Հանձնաժողովը որոշել է Կարգի 47-րդ կետի համաձայն՝ Ընկերությանը համակարգի միջոցով տալ մեկ աշխատանքային օր՝ ներկայացված անճշտությունը շտկելու համար:

11.02.2019թ. կայացած նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետով Հանձնաժողովն արձանագրել է, որ սահմանված ժամանակահատվածում «Ջի Թի Սի» ՍՊԸ-ի կողմից չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունը, և նույն արձանագրությամբ որոշել է Ընկերության հայտը մերժել:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում.

- 46-րդ կետի համաձայն՝ հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի՝

- 11-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ առաջին տեղն զբաղեցրած ճանաչված մասնակիցը հրավերով սահմանված՝ որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի հետ միասին ներկայացնում է նաև իր կողմից հաստատված՝ ապրանքների գնման դեպքում՝ առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը:

- 19-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի, ինչպես նաև նույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը:

- 21-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին: Նույն կարգի 20-րդ կետով սահմանված հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին:

- 23-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում քարտուղարը նույն օրը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

- 24-րդ կետի համաձայն՝ արձանագրված անհամապատասխանությունն առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից սահմանված ժամկետում՝

1) շտկվելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկվելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«ԱԲԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-2019/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի՝

- 7.10 կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը.
- 7.12 կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր եղանակով տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Ընդ որում, եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:
- 7.16 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված, ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված, որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի և (կամ) ապրանքի ամբողջական նկարագրի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում ծանուցմանը պարտադիր կցվում է հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը, որում պարտադիր և մանրամասն պետք է նկարագրված լինեն գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները, ներառյալ ապրանքի ամբողջական նկարագրի վերաբերյալ:

• 7.17 կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով նույն հրավերի 1-ին մասի 7.9-ից 7.16-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝

• 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ նույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայություններկի ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

• 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը;

• 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ:

• 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ

ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը:

- 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:
- 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- «ԱԲԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-2019/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 56-րդ, 61-րդ, 80-րդ, 81-րդ և 89-րդ չափաբաժինների մասով Ընկերությանը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից և ծանուցվել է՝ ծանուցումը ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը, առաջարկվող ապրանքի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը:
- «Ջի Թի Սի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված 3-ում բացակայում է առաջարկվող ապրանքի արտադրողի անվանումը:
- Հանձնաժողովը որոշել է համակարգի միջոցով Ընկերությանը տալ մեկ աշխատանքային օր՝ ներկայացված անճշտությունը շտկելու համար:
- Սահմանված ժամանակահատվածում «Ջի Թի Սի» ՍՊԸ-ի կողմից չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունը, ինչի հետևանքով Հանձնաժողովի կողմից Ընկերության հայտը մերժվել է:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ Ընկերությունը՝ Աճուրդի հրավերի թիվ 1 դիմում-հայտարարությամբ՝ պարտավորվելով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ԱԲԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-2019/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի

հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի արտադրողի անվանումը, սակայն այն չներկայացնելով՝ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին Ընկերության հետագա մասնակցության դադարեցմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ առկա է «Ջի Թի Սի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով սահմանված հիմքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով, 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 27.02.2019թ. թիվ 26/26/3146-19 գրությամբ «Ջի Թի Սի» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 02677537/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Ջի Թի Սի» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ